



Kingdom of the Netherlands



ԵՎՐԱՍԻԱ  
ԿԱՍԱԳՈՐԾԱԿԳՈՒԹՅՈՒՆ  
ՇԽՄԱՂԱՄ

## Կրոնական հանդուրժողականության թեմայով լավագույն լրագրողական նյութի ամենամյա մրցույթ (2016-2017)

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) հայտարարում է կրոնական հանդուրժողականության թեմաներին առնչվող կամ անդրադարձ կատարող լրագրողական լավագույն նյութի ամենամյա մրցույթ: Մրցույթի նպատակն է խրախուսել կրոնական հանդուրժողականության, խաղաղ համակեցության և բազմազանության վերաբերյալ հավասարակշռված և զգայուն լրագրողական լուսաբանումը՝ ուշադրություն սևեռելով Հայաստանի կրոնական և ազգային փոքրամասնությունների հիմնահարցերին, նպաստել հանդուրժողականության մթնոլորտի արմատավորմանը Հայաստանում:

Մրցույթը կընդգրկի 2016 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում հրատարակված մեդիա նյութերը: Մրցանակը կշնորհվի մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

### Մրցույթի մասնակցության պայմանները.

Լրագրողական նյութը.

1. կարող է լինել ցանկացած ֆորմատով՝ տպագիր, հեռուստատեսային, մուլտիմեդիա, ֆոտոշարք և այլ:
2. պետք է հրատարակված լինի հայաստանյան ԶԼՄ-ներով **2016 թվականի հոկտեմբերի 1-ից 2017 թվականի հունիսի 5-ը:**
3. պետք է անդրադառնա կրոնական հանդուրժողականությանը վերաբերող ամենատարբեր թեմաներին:
4. պետք է մրցույթին ներկայացվի հեղինակի կողմից կամ երրորդ անձի կողմից՝ հեղինակի համաձայնությամբ:

### Վերջնաժամկետը

Լրագրողական նյութերը կընդունվեն մինչև **2017 թվականի հունիսի 5-ը:**

### Ծանոթություն.

- **Յուրաքանչյուր անհատ կարող է ներկայացնել 1-4 հայտ**
- **Ընտրությունը կատարելու է մասնագիտական հանձնաժողովը**
- **Ներկայացվող փաթեթը (նյութեր, DVD) չի վերադարձվում հայտատուին:**

Խնդրում ենք հայտերն ուղարկել Նանե Պասկևիչյանին հետևյալ էլ-փոստով՝ [npaskevichyan@epfound.am](mailto:npaskevichyan@epfound.am)՝ վերնագրելով ձեր էլ-նամակը «ամենամյա լրագրողական նյութի մրցույթ»: